— Մա՛րդ, մա՛րդ սասնցիք են, եղբա՛յր, նախարարներու, իշխաններու, Արծրունեաց, Բագրատունեաց ընել չի կրցածը ըրին մարդիկը՝ գլուխ հանեցին: Տարօն հիմա արաբ մը չի կայ:

— Ի՞նչ կ'ըսես, եղբայր, երկու շաբաթ չի կայ, դեռ հոս էին Տարօնս եկած, սասիկ զարկին, մենք իմացանք, պատրաստուեցինք, որ էշնահատակ չլինինք. եթէ մեռնել է՝ գոնէ մեռցնենք այնպէս մեռէինք, ըսինք, մէկ մ’էլ իմացանք, որ անհետացեր են: Այս անօրէնները այս կողմ, այն կողմ կը զարնեն: Լաւ ծեծ մը պէտք է ուտեն, որ մեյ մ’էլ չի գան:

— Եթէ լաւ ծեծ մը այս անօրէնները խելօքցնէր, որ է՛լ չիգան, սասնցիքներէն երեք օր առաջ կերածնին պիտի լինի, վասնզի մէկ հատ չի մնացին. Ոստիկան, զօրապետ, ձիաւոր, հետեւակ, ամէնքն էլ մինչեւ վերջինը ջարդուեցան Մշոյ մէջ:

— Ի՞նչ, եղբայր, երա՞զ կը տեսնես:

— Ի՞նչ երազ, Ս. Կարապետ վկայ, որ հատ մը չմնացին:

— Դու ուստի՞ գիտես, ո՞վ քեզ պատմեց:

— Ես հոն էի, ես միասին էի. ես իմ աս ձեռոք քանի հատ հաւու պէս մորթեցի, ըսի քիչ մը առաջ. խո՞լ էիր, չիմացար:

Ան ատեն Վահրիճ սկսաւ ծայրէ ծայր պատմութիւնն ընել: Բոլոր ընտանիքը ժողուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէին. եւ երբ թշնամուոյն կոտորածին հասան, երբ ոստիկանին մահուան պատմութիւնն լսեցին, է՛լ ուրախութիւնը իր վերջին սահմանները գտաւ. Կարապետը իւր տղայքը վազցուց տէրտէրին, դրացուոյն, ազգականին, խնամիին ու սանահայրին տունը թէպէտ ձիւնը կ'ուգար բայց դարձեալ սենեակը բազմութեամբ լցուեցաւ, եւ երբ սասնցուոց քաջութիւնն երկրորդ անգամ եւ աւելի զարդարուն պատմեց Վահրիճ, ամէնքն զմայլեցան, գինին ծածկած կարասներէն յայտնի եղաւ՝ դուրս եկաւ, երգող բանաստեղծը իր եռաթելեան